ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 818-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____2024 թվականի N -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 818-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը և միջոցառումների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» N 818-Լ որոշման՝

- N 1 հավելվածի 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

21. ԽԵԿ-ի և ՄԵԿ–ի համարակալման գործընթացի վերահսկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կողմից, ԱՆԻ ՊԱՍ-ի սերվերի սպասարկումը և մուտքագրված տվյալների պահպանումն իրականացվում է նախարարության կողմից, իսկ էլեկտրոնային

տեղեկատվական համակարգի տեխնիկատեղեկատվական սպասարկումը՝ կազմակերպության կողմից։ .

- N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի 1-ին նախադասության ։ կետադրական նշանը փոխարինել ՝ կետադրական նշանով.
- N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի 1-ին նախադասության ականջապիտակը։ բառից հետո լրացնել՝ ականջապիտակը՝ ելքագրման նպատակով բառերով.
- N 1 հավելվածի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «։» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.
- N 1 հավելվածի 32-րդ կետը լրացնել նոր 4-րդ ենթակետով.

4) անձնական սպառման համար (այդ թվում՝ կրոնական և այլ ընդունված ծիսակատարությունների) մորթված կենդանու ականջապիտակը անասնապահությամբ զբաղվող տնտեսավարողի կողմից 7 օրվա ընթացքում հանձնվում է կազմակերպության անասնաբույժին՝ ելքագրման նպատակով։ .

- N 2 հավելվածի 5-րդ կետի 3-րդ սյունակի Տեսչական մարմին բառերը փոխարինել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**